Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 10

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<07>> հուլիսի 2021թ. ք. Երևան

2021 թվականի հուլիսի 7-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Ա. Կարապետյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
Ա. Ստեփանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար,
Ա. Բաղալյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
Ն. Թևոսյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի անդամներ Ա. Թումանյանը և Ա. Պապյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2. «ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

«ՏԱՔՍԻ ԴԵ ԼՅՈՒՔՍ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի 02.07.2021թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05224 լիցենզիան և լիցենզիայի N 00001, N 00002, N 00003, N 00004, N 00005, N 00006, N 00007, N 00008, N 00009, N 00010, N 00011, N 00012, N 00013, N 00014, N 00015, N 00016, N 00017, N 00018, N 00019, N 00020, N 00021, N 00022, N 00023, N 00024, N 00025, N 00026, N 00027, N 00030, N 00033, N 00035, N 00036, N 00037 և N 00038 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց «ՏԱՔՍԻ ԴԵ ԼՅՈՒՔՍ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի 02.07.2021թ. դիմումը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏԾ N 05224 լիցենզիան և լիցենզիայի N 00001, N 00002, N 00003, N 00004, N 00005, N 00006, N 00007, N 00008, N 00009, N 00010, N 00011, N 00012, N 00013, N 00014, N 00015, N 00016, N 00017, N 00018, N 00019, N 00020, N 00021, N 00022, N 00023, N 00024, N 00025, N 00026, N 00027, N 00030, N 00033, N 00035, N 00036, N 00037 և N 00038 ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՏԱՔՍԻ ԴԵ ԼՅՈՒՔՍ ՍԻԹԻ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. «ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերությանը տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

«ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի հունիսի 17-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին, ինչպես նաև ի պատասխան լիցենզավորող մարմնի 24.06.2021թ. թիվ ԱՍ/25.1/16108-2021 գրությանն ի պատասխան 2021 թվականի հունիսի 28-ին ներկայացված գրությունը:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի հունիսի 17-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 24.06.2021թ. թիվ ԱՍ/25.1/14316-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝ Կազմակերպության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության համար նախատեսված արտադրական տարածքում մոնտաժված են տեխնիկական արատորոշման միջոցների հետ առնչություն չունեցող սարքավորումների առկայության վերաբերյալ, որոնք խոչընդոտում են արտադրական տարածքից տրանսպորտային միջոցների ելքը, իսկ խոչընդոտի շրջանցումը կարող է իրականացվել միայն Կազմակերպության տիրապետման կամ օգտագործման տակ չգտնվող տարածքով:

Հայտին կից, ինչպես նաև լրացուցիչ ներկայացված փաստաթղթերում բացակայում է վերը նշված տարածքների օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ:

Միաժամանակ Կազմակերպության հայտին կից ներկայացված՝ ղեկային վարման համակարգի արատորոշման «ИСЛ-М» սարքավորման տեխնիկական անձնագրի պարամետրերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ նշված սարքավորումը իրականացնում է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 344-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի ցանկ N 3 ցանկի 6-րդ կետով սահմանված՝ ղեկային վարման գումարային խաղի ստուգաչափումը, իսկ նույն ցանկի 14-րդ կետով սահմանված տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցի վիճակի պարտադիր արատորոշման համար նախատեսված սարքավորման /ստենդի/ վերաբերյալ տվյալները բացակայում են:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԷՅ ԷՄ ԷՅ ՄՈԹՈՐՍ>> ՍՊԸ	0 կողմ, 5 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով և ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 344-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի ցանկ N 3 ցանկի 14-րդ կետով սահմանված պահանջներին: «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 5-րդ մասով ենթակա են մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
քարտուղար Ա. Ստեփանյան